ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌՈՒՄ 1918-1921՝ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԿԱՐԻՆԷ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
karineal@mail.ru

ՄՈՒՏՔ

Թուրքիայի արդի արտաքին քաղաքականութեան առանցքը համարուող ժխտողականութիւնը մինչեւ Հայոց Մեծ Եղեռնի տարիները ձգուող խոր արմատներ ունի[1]:

Թէեւ միջազգային գիտական շրջանակներում ժխտողականութիւնը ընկալւում է որպէս ցեղասպանութեան վերջնափուլ, երբ ազգի ոչնչացումից յետոյ արմատախիլ են արւում ազգի մշակոյթը եւ պատմական յիշողութիւնը[2], Թուրքիայում այն դրսեւորուել է ցեղասպանութեան իրականացման հետ միաժամանակ: Թուրք պետա-կան գործիչները, գիտակցելով հայ ժողովրդի եւ մարդկութեան դէմ իրա-կանացուելիք հրեշաւոր արարքի յանցաւորութիւնը, նախապէս քայլեր են ձեռնարկել յետագայում պատասխանատուութիւնից խուսափելու համար:



Մի ամբողջ ժողովրդի հայրենազրկելու եւ ոչնչացնելու հրեշաւոր արաքի համար հատուցման ժամը յետաձգելու յոյսով, թուրքերն այսօր եւս շարունակում են կառչել ժխտողականութեան արմատներից՝ կենսունակ դարձնելով դրանք նոր ժամանակակից մեթոդներով[3]:

Թուրքական ժխտողականութեան արմատները տարածուել են նաեւ Արեւելեան Հայաստանում, որտեղ Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտական փուլում շարունակուող հայոց ցեղասպանութեան քաղաքականութիւնը թուրքական իշխանութիւնները իրականացրել են աւելի զգուշ եւ խորամանկ քայլերով: Թուրք ոճրագործները, 1918-1921թթ. ընթացքում երկու անգամ վեցական ամսով ռազմակալելով Ալեքսանդրապոլի Գաւառը, իրենց դիւանագիտական զի-նանոցի պաշարները հարստացնելով մարդակերութեան նոր մեթոդներով յօշոտել են եղեռնից վերապրած արեւմտահայութեանը, ինչպէս նաեւ

արեւելահայութեան մի ստուար զանգուած, թալանել եւ տնտեսապէս քայքայել Ալեքսանդրապոլի Գաւառը, ձեռնարկել ամէն քայլ իրենց հարեւանութեամբ առաջացած հայկական նորանկախ պետութեանը զրկելու կենսունակ պետութիւն դառնալու հնարաւորութիւնից[4]:

Արեւելեան Հայաստանում իրականացուող հայոց ցեղասպանութեան քաղաքականութեան հիմքում դնելով այնպիսի մի ռազմավարութիւն, որը միայն 1960ականներին միջազգային հանրութեան բառապաշարում պէտք է յայտնի դառնար ժխտողականութիւն անուանումով[5], թուրք ջարդարարները ջանացել են ոչ միայն տուեալ ժամանակաշրջանում, այլ յետագայում եւս ապահովել իրենց միջազգային հանրութեան կարծիքից եւ հատուցումից: Յամենայնդէպս մինչ այսօր միջազգային հանրութեան կողմից դեռ չեն արծարծւում Արեւելեան Հայաստանում թուրքերի կատարած ցեղասպանութեան եւ դրա հետեւանքների մասին հարցերը:

Ընդ որում ոչ միայն միջազգային հանրութիւնը, այլ նաեւ հայ հասարակութիւնը ցեղասպանութիւնից 100 տարի անց դժուարանում է ընկալել Ալեքսանդրապոլի Գաւառում թուրքական ժխտողականութեան դրսեւորումները՝ յաճախ տուրք տալով ժխտողականութեան տարածուած մեթոդներց մէկին՝ զոհին մեղադրելուն: Հայ պատմագիտական մտքի եւ հասարակական գիտակցութեան մէջ առկայ են ոչ այնքան Արեւելեան Հայաստանում թուրքական ժխտողականութեան դրսեւորումների եւ Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան ապրած ողբերգութեան բացայայտման, որքան նրանց մեղադրելու միտումները: Աւելին, նշուած ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի Գաւառում տեղի ունեցած իրադարձութիւնների մասին կարծիքները ինչպէս պատմագիտութեան, այնպէս էլ հասարակական գիտակցութեան մէջ վերածուել են կարծրատիպերի: Մասնաւորապէս Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութիւնը մեղադրւում է թուրքերին չդիմադրելու եւ նրանց հետ համագործակցելու համար: Մինչդեռ 1918-1921՝ Ալեքսանդրապոլի Գաւառի թուրքական զինակալման շրջանում թուրք-հայկական յարաբերութիւնների հիմքում ընկած էր թուրքական պետականօրէն մշակուած ցեղասպանութեան քաղաքականութեանը դիմակայող հայ բնակչութեան պայքարն իր ֆիզիկական գոյութեան համար[6]:

Թուրքական ժխտողականութեան ռազմավարութիւնը գրեթէ նոյնութեամբ կիրառուել է ինչպէս 1918, այնպէս էլ 1920՝ թուրքական արշաւանքների ժամանակ: Այսպէս թէ՛ 1918 եւ թէ՛ 1920ին թուրքերը իրենց առաջխաղացումն Արեւելեան Հայաստանում պայմանաւորել են դաշնակից պետութիւնների՝ նախ Գերմանիայի, ապա եւ Խորհրդային Ռուսաստանի շահերով: Երկու դէպքում էլ հանդէս են եկել հայերի շահերի պաշտպանութեամբ՝ միաժամանակ մեղադրելով նրանց իրենց առաջխաղացման համար:

1918ին՝ Առաջին Համաշխարհային Պատերազմի աւարտական փուլում Արեւելեան Հայաստանում իրականացուող ռազմարշաւն իրենց դաշնակից Գերմանիայի շահերին համապատասխանեցնելու եւ զաւթողական նպատակները քօղարկելու համար, այն ներկայացւում է իբր թէ հնարաւորութիւն՝ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղով թուրքական զօրքերը Պարսկաստան տեղափոխելու եւ Թաւրիզը հնարաւորինս շուտ անգլիացիներից գրաւելու համար[7]: Հայաստանի համար կենսական նշանակութիւն ունեցող երկաթուղու գրաւման այս հրեշաւոր ծրագրի իրականացումը, որը փաստօրէն մահ էր բերում հայերին, ներկայացւում է ոչ միայն Գերմանիայի, այլ, որքան էլ տարօրինակ կարող է թուալ զոհերի՝ հայերի շահերից բխող գործողութիւն[8]:

Մայիսի 13ին թուրքական պատուիրակութեան նախագահ Խալիլ բէյը եւ Կովկասեան ճակատի հրամանատար Վեհիբ փաշան, հանդիպելով Անդրկովկասի պատուիրակութեան հայ անդամներ Ալեքսանդր Խատիսեանի եւ Յովհաննէս Քաջազնունու հետ նրանց համոզում են, որ առանց դիմադրութեան ամբողջ երկաթուղու յանձնումը բխում է հայերի շահերից, քանի որ քաղաքների ու գիւղերի միջոցով թուրքերի անցումը վտանգաւոր կը լինի նրանց համար, իսկ երկաթուղով անցումը՝ ապահով[9]: Թուրքական ժխտողական ռազմավարութեան կարեւոր դրսեւորումներց էր զօրքի եւ բնակչութեան դիմադրական կարողութիւնների եւ զգօնութեան թուլացումը: Այսպէս, 1918 Ապրիլին Կարսը գրաւելուց յետոյ ամբողջ 20 օր նրանք ոչ միայն ոչ մի թշմական գործողութիւն չեն կատարում՝ ստեղծելով այնպիսի տպաւորութիւն, որ առաջխաղացման որեւէ մտադրութիւն չունեն, այլ յաճախակի «բարեկամական» այցելութիւններ են կատարում Ալեքսանդրապոլ՝ ուղարկելով սպայական փոքր խմբեր, որոնք իհարկէ զբաղւում էին լրտեսութեամբ[10]: Իսկ Ալեքսանդրապոլը գրաւելու գործողութիւնը կարելի է համարել թուրքական ժխտողականութեան ռազմավարութեան դասական օրինակ: Բնակչութեան եւ զօրքի զգօնութիւնը թուլացնելուց յետոյ, Մայիսի 15ին Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի յանձնման պահանջը վերջնագրի տեսքով եւ պարսկերէնով փակ ծրարը, որ հնարաւոր չլինէր այն կարդալ, թուրքերն ուղարկում են Ալեքսանդրապոլի բերդի պարէտ Եանկովսկուն: Փաստօրէն, խաղից դուրս թողնելով իրենց դաշնակից Գերմանիային եւ Անդրկովկասի կառավարութեանը, թուրքերը վերջնագիր են ներկայացնում Ալեքսանդրապոլի զինուորական իշխանութիւններին: Վերջիններս, ուղղակիօրէն յայտնուելով թուրքական դիւանագիտութեան սարդոստայնում եւ չկարողանալով ճիշտ կողմնորոշուել ստեղծուած իրավիճակում, բնակչութեանը թողնում են անպաշտպան թուրքական վտանգի դէմ: Բերդի պարէտը անձամբ գնում է թուրքերի մօտ պարզելու նամակի բովանդակութիւնը, վերջիններս տեսնելով, որ բերդը մնացել է առանց հրամանատարի, անմիջապէս սկսում են ռմբակոծել քաղաքը եւ

տարբեր ուղղութիւններով յարձակման անցնում[11]: Յանկարծակի եկած հայոց զօրքն այնուամենայնիւ որոշ հատուածներում հերոսաբար կռւում է: Ժամը մէկին վերադառնում է Եանկովսկին՝ բերելով գրութեան թարգմանութիւնը: Օղակման մէջ ընկած եւ յուսահատական դիմադրութիւն ցոյց տուող հայկական առանձին զօրամասերի դիմադրութիւնը կոտրած լինելու նպատակով, թուրքերը գնդապետ Եանկեւսկուն ողորմածաբար խոստանում են նաեւ չորս ժամով մինչեւ երեկոյեան հինգը դադարեցնել կրակն ու յարձակումը: Այդ կարճատեւ զինադադարը բոլորովին քայքայում եւ կազմալուծում է այս ու այն հատուածում կռուողների շարքերը՝ փախուստ-նահանջի հնարաւորութիւն ստեղծելով նրանց, թուրքերի համար ապահովելով Վեհիբ փաշայի սպառնացող «շքերթը»[12]: Այդ ընթացքում թուրքական անակնկալ յարձակումից անօրինակ խուճապի մատնուած բնակչութիւնը բոլոր հնարաւոր ուղիներով փախչում է քաղաքից՝ իր հետ տանելով նաեւ իրենց ընտանիքներին միացած զինուորներին: Ընդ որում քաղաքից հեռանում են ոչ միայն այստեղ ապաստանած գաղթականների եւ տեղի բնակչութեան մեծ մասը, այլ նաեւ քաղաքային ինքնավարութեան ամբողջ կազմը. հասարակական, գաղթականական, բանկային, կօօպերատիւ, մթերային բոլոր կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ քաղաքային ամբողջ միլիցիան՝ իր շտաբով: Մի քանի ժամուայ ընթացքում ամբողջ քաղաքը դատարկւում է, եւ մնացած ոչ մեծաքանակ բնակչութիւնը, բնակարանները, պահեստները, առեւտրական եւ այլ շէնքեր մնում են բախտի քմահաճոյքին: Դատարկւում են նաեւ գաւառի գիւղերը[13]: Ռազմաճակատի եւ կայազօրի զօրքերը ետ են քշւում ճակատից 20 վերստ հեռու[14]:

Թուրքերը մինչ այդ հոգ էին տարել Ալեքսանդրապոլը պաշտպանութիւնից զրկելու ուղութեամբ: Իրենց ռազմական առաջխաղացումը պայմանաւորելով իբր թէ հայկական ուժերի կողմից մուսուլման բնակչութեան կոտորածներով, չէզոքացրել էին թուրքերի սարսափ համարուող Անդրանիկին եւ նրա զինուորներին: Պատերազմի մեղքը բարդելով Անդրանիկի վրայ, մի կողմից առաջացրել էին հայ բնակչութեան դժգոհութիւնը՝ զրկելով Անդրանիկին նրանց աջակցութիւնից, միւս կողմից՝ հայ քաղաքական գործիչներին դրդել մեկուսացնել Անդրանիկին ռազմական գործողութիւնների վայրերից: Հայոց ազգային խորհուրդը, ընդունելով թուրքական դիւանագիտութեան այս խայծը, ամէն ինչ արել էր, որպէսզի Անդրանիկի զօրամասն առանձնացուէր եւ թշնամու յարձակման գլխաւոր ուղղութիւնից մի կողմ գտնուող գծի վրայ ուղարկուէր: Պատահական չէ, որ Ապրիլի 13ին Նազարբեկեանը հրամայել էր Անդրանիկին իր ջոկատով պահպանել Ախալքալաքի եւ Ալեքսանդրապոլի հաղորդակցութիւնը եւ հսկողութիւն սահմանել Կարսի Մարզի վրայ[15]: Մայիսի 8ին Հայաստանի

Ապահովութեան Խորհրդի նախագահ Վահան Փափազեանը, Հայկական Հարուածող Առանձին Զօրամասի հրամանատար զօրավար Անդրանիկին ուղղուած պաշտօնական գրութեան մէջ, նրա ուժերի տեղաբաշխումը պատճառաբանել էր այն հանգամանքով, որ կովկասեան կառավարութիւնը ամէն զոհողութիւններով ջանում է որեւէ առիթ չտալ, որ թուրքական բանակը սահմանն անցնի: «*Կը գտնենք*,- նշուած էր այդ գրութեան մէջ,- *որ գլխաւորապէս թուրքահայ զօրամասերի եւ Ձեր ներկայութիւնը այնտեղ վերոյիշեալ տեսակէտից կարող է յարմար առիթ համարուել թուրքական բանակի կողմից եւ անցանկալի արդիւնք ունենալ թէ զինադադարի յարգման եւ թէ մանաւանդ թուրքահայերի շահերի տեսակէտից*»[16]:

Փաստօրէն թուրք դիւանագէտները կարողանում են հասնել այն բանին, որ իր ամբողջ գիտակցական կեանքը թուրքերի դէմ կռուող հերոսը հայութեան համար բախտորոշ պահին չկարողանար մասնակցել հայոց գոյամարտին: Աւելին, Անդրանիկը մի կերպ խոյս տուեց անխուսափելի ոչնչացումից: Ալեքսանդրապոլի յանձնուելուց յետոյ շուտ կողմնորոշուելու եւ արագ տեղաշարժուելու շնորհիւ միայն նա կարողացաւ փրկուել շրջափակումից եւ ոչնչացումից: Նա, գրեթէ բոլոր կողմերից շրջապատուած լինելով թուրքերով, եռօրեայ կռիւներով չէզոքացրեց թուրքերի կողմից պաշարման վտանգը եւ կորպուսի միւս զօրամասերի հետ կապ հաստատելու միակ ելքը տեսնելով դէպի երկաթգիծը շարժուելու մէջ, խուճապի մատնուած գաղթականութեան հետ միասին շարժուեց դէպի Ջալալօղլի եւ երկու օրուայ կատաղի կռիւներից յետոյ հասաւ Դիլիջան: Այստեղ, իմանալով Բաթումի Պայմանագրի կնքման մասին, հեռացաւ Հայաստանի Հանրապետութեան սահմաններից:

Պակաս դեր չունեցաւ թուրքական դիւանագիտութիւնը նաեւ Անդրանիկի Հայաստանից հեռանալու գործում: Բաթումի Պայմանագրում հայկական ջոկատները ցրելու հարցը բարձրացնելը եւս ժխտողականութան ռազմավարութեան դրսեւորում էր: Փաստօրէն, իբր թէ Հայաստանում կարգ ու կանոն հաստատելու նպատակով պահանջում են վերացնել անօրինական զինուորական խմբերը, (բանդաները, ինչպէս պայմանագրում էր ամրագրուած), սակայն իրականում նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեանը զրկում Անդրանիկի պատերազմի բովով անցած կռուողների պաշտպանութիւնից: (Երկու տարի անց՝ 1920ին Հայաստանը զգաց միայն դրա հետեւանքները:) Հայաստանի իշխանութիւններին պարտադրելով կատարել Բաթումի Պայմանագրի կէտերը, միաժամանակ իրենք բոլոր միջոցներով խուսափում էին հայ գերիներին եւ գաղթականներին իրենց բնակութեան վայրերը վերադարձնելու նոյն պայմանագրով ամրագրուած պարտաւորութիւններից: Ալեքսանդրապոլում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյէցեանի՝ արտաքին գործերի նախարարին 1918 Սեպտեմբեր 8ին

ուղղած գրութիւնից երեւում է, որ գերիները ոչ միայն վերադարձուած չէին, այլ գտնւում էին սոսկալի պայմաններում[17]: Գաղթականները եւս երկար ժամանակ չէին կարող վերադառնալ իրենց բնակութեան վայրերը: Թուրքական ժխտողականութեան դրսեւորումներից էր նաեւ գաղթականներին իրենց բնակութեան վայրերը չթողնելը եւ գաղթը չխրախուսելը: Մի կողմից դիւանագիտական խարդաւանքներով եւ յանկարծակի յարձակումներով խուճապ առաջացնելով բնակչութեան մէջ, ստիպում էին վերջիններիս բռնել գաղթի ճանապարհը, միւս կողմից՝ իբր թէ չեն խրախուսում գաղթը, բնակչութեանը կոչ էին անում չգաղթել եւ չդիմադրել: Աւելին, դիմադրողներին դաժանօրէն պատժում էին, իսկ գաղթողներին՝ արգելում վերադառնալ իրենց բնակութեան վայրերը՝ մատնելով սովի եւ զրկանքների: Մեղադրելով գաղթականներին իբր թէ օսմանեան պետութեան դէմ յանցագործութիւններ կատարելու մէջ, (այլապէս ինչու պէտք է փախչէին իրենցից) զրկում էին նրանց սեփականութեան իրաւունքից եւ պետականացնում ունեցուածքը: Հատկանշական է, որ երբ Ալեքսանդրապոլից հեռանալուց յետոյ բնակչութիւնը Ղարաքիլիսայում, յայտնուելով անելանելի վիճակի մէջ, պատուիրակութիւն է ուղարկում թուրք փաշայի մօտ խնդրելով վերադառնալու հնարաւորութիւն տալ իրենց, վերջինս մերժում է, խոստանալով միայն երեք օր յետոյ թողնել[18]: Սակայն նրանք այդպէս էլ չեն կարողանում վերադառնալ, քանի որ Ղարաքիլիսայի ճակատամարտում նրանց մի մասը կոտորւում է, իսկ մնացածները, որ մի կերպ հասնում են Թիֆլիս, երկար ժամանակ չէին կարող վերադառնալ, թէեւ Բաթումի Պայմանագրով նրանց այդ հնարաւորութիւնը տրուել էր[19]: Իսկ ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի Գաւառում ապաստանած արեւմտահայ գաղթականներին, ապա կտրուկ արգելելով վերջիններիս վերադարձը, ոչնչացնում էին նրանց անխնայ, ինչպէս ուղղակի կոտորելով, այնպէս էլ սովի եւ թշուառութեան մատնելով[20]:

Թուրքական ժխտողականութեան ռազմավարութեան իւրայատուկ դրսեւորումներից էր տեղական իշխանութեան մարմինների ստեղծումը եւ նրանց միջոցով իրենց գործողութիւններին օրինական տեսք տալը[21]: Փախստական դարձած հայ բնակչութեան անտէր մնացած հարստութիւններն օրինական կարգով թալանելու նպատակով Մայիսի 17ին թուրքերն այստեղ ստեղծում են տեղական իշխանութեան մարմիններ՝ քաղաքային խորհուրդ եւ վարչութիւն, որոնց միջոցով էին միայն շփւում բնակչութեան հետ[22]: 1918 Սեպտեմբերին միայն, երբ ակնյայտ էր Թուրքիայի պարտութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմում, ՀՀ կառավարութեանը թոյլատրւում է Ալեքսանդրապոլում ունենալ ներկայացուցչութիւն[23]: Հայ բնակչութեանը մինչեւ վերջին հնարաւորութիւնը կոտորելու եւ թալանելու, եւ միաժամանակ բարիդրացիական յարաբերութիւններ հաստատելու, վիճակը մեղմելու,

բարեկամ ձեւանալու թուրքական դիւանագիտական քայլերն ուղղակի ապշեցնող են: Ալեքսանդրապոլի Գաւառն ամբողջովին թալանելուց եւ բնակչութիւնե կոտորելուց յետոյ, զգալով պատերազմում իրենց մօտալուտ պարտութիւնը եւ պատասխանատուութիւնից վախենալով, փորձում են հանդարտեցնել կրքերը, հաստատել բարիդրացիական յարաբերութիւններ թուրք պաշտօնեաների եւ հայ հասարակութեան միջեւ: Ինքը՝ Արեւելեան ռազմաբեմի զօրահրամանատար Հալիլ փաշան, ոչ միայն սիրալիր ընդունում է Ալեքսանդրապոլում ՀՀ արտգործնախարարութեան ներկայացուցիչ նշանակուած Խոյեցեանին, այլ նոյնիսկ փոխայցելութիւն է կատարում: «*Հայերու վերաբերմամբ այնքան դաժան ու անողոք քաղաքականութիւնը հիմա մէկէն կը փոխուէր,*- գրում է Խոյեցեանն ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղուած զեկուցագրում,- *եւ կը դառնար ջերմ, սիրալիր բարեկամութեան եւ ամէն ջանք գործ կը դրուէր օր առաջ հայերու հետ խնդիրը կարգադրել եւ «թեւանցուկ», ինչպէս իրենք կ'ըսէին, մտնել ընդհանուր ժողովասրահը*»[24]:

Հայոց պետականութեան ոչնչացումը թուրքական դիւանագիտութեան հիմնական նպատակն էր: Բաթումի Պայմանագրով առաջինը ճանաչելով հայոց պետականութեան գոյութիւնը, թուրքերը միաժամանակ ջանքեր չխնայեցին այն ոչնչացնելու ուղղութեամբ: Եւ նոյնիսկ Անդրկովկասից իրենց հեռանալուց յետոյ, շարունակելով այդ քաղաքականութիւնը, միաժամանակ հայերին եւ վրացիներին առաջարկելով գրաւել իրենց կողմից դատարկուած տարածքները, հրահրեցին հայ-վրացական պատերազմ, որը ծանր հետեւանքեր ունեցաւ ՀՀ, յատկապէս թուրքական բռնազաւթման պայմաններում վեց ամիս գտնուած Ալեքսանդրապոլի Գաւառի տնտեսական կեանքի վրայ: Եւ, ընդհանրապէս, այն ինչ արեցին թուրքերն իրենց վեցամսեայ բռնազաւթման շրջանում, այլ որակում չունի քան ցեղասպանութիւն: Հայաստանի Հանրապետութիւնը, մասնաւորապէս Ալեքսանդրապոլի Գաւառը երկար ժամանակ զգում էր այդ քաղաքականութեան ծանր հետեւանքները: Ահաւոր թալանը, երիտասարդութեան ոչնչացումը, հազարաւոր արեւմտահայ գաղթականների առկայութիւնը, ՀՀ կառավարութեանը հնարաւորութիւն չընձեռեցին յաղթահարել ծանր ընկերային-տնտեսական վիճակը: Չնայած բոլոր ճիգերին, յամենայն դէպս մինչեւ 1920ի թուրքական նոր արշաւանքը Ալեքսանդրապոլի Գաւառը գտնւում էր սովի ճիրաններում:

Ամերիկեան օգնութեամբ մի կերպ անխուսափելի կործանումից փրկուած Հայաստանը 1920ին յայտնւում է թուրքական սալի եւ ռուսական մուրճի արանքում: Աւելին, թուրքերի կողմից որակուելով արեւմտեան կայսերապաշտութեան դաշնակից՝ ենթարկւում նոր ցեղասպանութեան, այս անգամ բոլշեւիկների դաշնակից քեմալականների կողմից: Իրենց նախորդների ժխտողական ռազմավարութիւնը շարունակող

քեմալականները, թուրքական շահերը յարմարեցնելով Խորհրդային Ռուսաստանի շահերին, ապահովում են իրենց առաջխաղացումը մինչեւ Սարիղամիշ- Շահթախթի գիծը: Նախիջեւանի վրայով Կարմիր Բանակի հետ անմիջական կապ ստեղծելու պատրուակով, առանց որի, իբր թէ քեմալականները մէկ ամիս էլ չեն դիմանայ, գրաւում են Սարիղամիշը, այնուհետեւ անակնկալ յարձակումով նաեւ Կարսը՝ փաստի առաջ կանգնեցնում բոլշեւիկներին: Իսկ վերջիններիս դժգոհութիւններից խուսափելու համար, իրենց առաջխաղացումը պայմանաւորելով իբր ՀՀում խորհրդային իշխանութիւն հաստատելու հետ, հանդէս են գալիս ՀՀ խորհրդայնացման ջատագովներ: Թուրքերն, իհարկէ, այս անգամ եւս չեն մոռանում դա բխեցնել հայերի շահերից: Պարզւում է, որ իրենց առաջխաղացումը աւելի շատ պէտք էր հայերին, քանի որ վերջիններս ազատւում էին «դաշնակցականների դարաւոր լծից», իսկ իրենք ընդամէնը հնարաւորութիւն էին ստանում իշխանութիւնը յանձնել հայ ժողովրդի իրական կարիքները հոգացող կուսակցութեանը: «*Անպտղիական կառավարութիւնը յատկապէս յուսով է*,- ասուած էր Հոկտեմբերի 27ին Մոսկուայում ստացուած մի հեռագրում,- *որ դաշնակների պարտութիւնը կը յանգեցնի նրան, որ հայ ժողովուրդը կը կանգնի իր շահերին համապատասխան խելացի ուղու վրայ եւ իշխանութեան գլուխ կը դնի ժամանակի հրատապ պահանջները հասկանալու ընդունակ եւ խորհրդային ու անպտղիական կառավարութիւնների միջեւ բարեկամական կապող օղակի դեր կատարող հայկական կառավարութիւն: Անպտղիական կառավարութիւնը հաւատում է, որ խորհրդային Ռուսաստանը առանց տատանուելու իր օգնութիւնն ու աջակցութիւնը ցոյց կը տայ այդ գործին, որը յուսալիօրէն կ'ապահովի ուղիղ կապը երկու բարեկամական ժողովուրդների միջեւ*»[25]: Իսկ Ալեքսանդրապոլի Գաւառի գրաւման հարցում նրանք գերազանցեցին իրենք իրենց՝ նոր գոյներ աւելացնելով թուրքական ժխտողականութեան ներկապնակի մէջ: Կարաբեքիրը, մի կողմից ռազմական առաջխաղացումը պայմանաւորելով Խորհրդային Ռուսաստանի շահերով, միւս կողմից՝ ՀՀ իշխանութիւնների հետ զինադադարի պայմանով գրաւում է Ալեքսանդրապոլի կարեւոր ռազմագիտական կէտերը՝ բերդն ու կայարանը:

Նոյեմբերի 5ին Կարաբեքիրը հայոց բանակի հրամանատարին յայտնում է, որ ինքը ստացել է հաշտութեան մասին ՀՀ կառավարութեան առաջարկը եւ հեռագրով հաղորդել Անկարա եւ խոստանում է պատասխանը հաղորդել: Իսկ մինչ պատասխանի ստանալը առաջարկում է նախնական զինադադար, պայմանով, որ հայերը ետ քաշեն զօրքը Արփաչայի արեւմտեան ափից ձախ, թուրքական զօրքերը գրաւեն Ալեքսանդրապոլի բերդը, երկաթուղային կայարանը եւ շուրջը 10 կմ շրջակայքով[26]: Իսկ երբ, հայկական զօրքերը, կատարելով զինադադարի

պայմանները, սկսում են ետ քաշուել Արփաչայի արեւմտեան ափից, ինչպէս նաեւ դատարկել Ալեքսանդրապոլի դիրքերը եւ հաստատուել Ջաջուռի ստորոտում գտնուող հայկական գիւղերում, Կարաբեքիրը կատարում է յաջորդ քայլը: Իր կողմից առաջարկած զինադադարով հայերին ստիպելով փաստօրէն առանց դիմադրութեան իրեն յանձնել Ալեքսանդրապոլը եւ զրկուել կարեւոր ռազմագիտական դիրքերից, Նոյեմբերի 8ի երեկոյեան հայկական կողմին առաջարկում է նոր, աւելի ծանր զինադադարի պայմաններ իր կառավարութեան կողմից՝ նպատակ ունենալով մերժման դէպքում, զարգացնել ռազմական յաջողութիւնները եւ գրաւել Ալեքսանդրապոլի Գաւառը[27]: Փաստօրէն Կարաբեքիրը ստիպում է ՀՀ իշխանութիւններին երկու զինադադար կնքել, մէկն իր եւ միւսն՝ իր կառավարութեան հետ: ՀՀ կառավարութիւնը յոյս ունենալով, որ ժողովուրդը կը դիմադրի, Նոյեմբերի 10ին մերժում է զինադադարի պահանջները, դրանով իսկ հնարաւորութիւն տալով թուրքերին առաջխաղալ եւ գրաւել Ալեքսանդրապոլի Գաւառը: Կարաբեքիրը, չսպասելով Անկարայի պատասխանին, իսկոյն պատասխան նոտա է յղում ՀՀ կառավարութեանը, որի մէջ ասում է, թէ իր եւ կառավարութեան պայմանները չպէտք է շփոթել, եւ քանի որ ՀՀ կառավարութիւնը չի ընդունում իր կառավարութեան պայմանները, ուստի ինքը ստիպուած է վերսկսել ռազմական գործողութիւնները[28]: Ակնյայտ է, որ ռազմագիտական կարեւոր դիրքերից զրկուած հայոց բանակը, նոյնիսկ լաւագոյն ցանկութեան դէպքում, չէր կարող կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: Ալեքսանդրապոլի Գաւառը թուրքերի կողմից գրաւուելուց յետոյ միայն ՀՀ կառավարութիւնը Նոյեմբերին 18ին ստիպուած է լինում կնքել զինադադար[29]:

Թուրքերն, իհարկէ, նախապէս հոգացել էին հայ բնակչութեան դիմադրական կարողութիւնները թուլացնելու, երկպառակութիւն գցելու մասին: Նոյեմբերի 6ի կնքած զինադադարով թուրք հրամանատարութիւնը երաշխաւորում էր, որ քաղաքում չի խանգարուի կարգ ու կանոնը, եւ ազգաբնակչութեան ապահովութիւնը[30]: Նոյեմբերի 7ին, քաղաք մտնելով, Կարաբեքիրը նամակով դիմում է Ալեքսանդրապոլի բնակչութեանը, կոչելով հանգստութիւն պահպանել, հաւատացնելով, որ իրենք խաղաղ բնակչութեան նկատմամբ թշնամական տրամադրութիւն չունեն, այլ միայն դաշնակցականների, որոնք իբր թէ պատճառ են հանդիսացել իրենց առաջխաղացմանը: Նամակում առաջարկւում է նաեւ դիմաւորել իրենց իբր ազատարարների[31]:

Ինչպէս 1918ին, այնպէս էլ 1920ին թուրքերը զանգուածային եւ բացայայտ կոտորածներ չեն իրականացնում այն վայրերում, որտեղ իրենց դիմաւորում էին եւ դիմադրութիւն ցոյց չէին տալիս: Եւ հակառակը՝ անխնայ կոտորում էին դիմադրութիւն ցոյց տուող վայրերի բնակչութեանը՝ այս կերպ թուլացնում բնակչութեան դիմադրական

կարողութիւնները, հակասութիւններ առաջացնում նրանց մէջ: Դիմադրութիւն ցուցաբերողները յաճախ մեղադրւում էին բնակչութեան կողմից, իբր թէ կոտորածներին առիթ տալու համար: Իսկ կոտորածներ թուրքերն, այնուամենայնիւ իրականացնում էին թաքուն, խաբէութեամբ եւ այլ միջոցներով: Դա, իհարկէ, նրանց չէր խանգարում շնորհակալական թերթիկներ պահանջել հայ բնաչութիւնից, իբր թէ իրենք նպաստել են կարգ ու կանոնի հաստատմանը «*տեղիք չտալով ոչ քայքայման, ոչ թալանի եւ ոչ էլ սպանութեան*»[32]:

Թուրքերը, 1920-1921՝ ռազմակալուած Ալեքսանդրապոլի Գաւառում յաջողութեամբ զարգացնում են 1918ին կիրառած տեղական իշխանութեան մարմինների ստեղծման ռազմավարութիւնը: Թուրքական ռազմակալման ամբողջ շրջանում Ալեքսանդրապոլի Գաւառում ստեղծում են միքանի իշխանութիւններ, երբեմն դրանք հակադրելով միմեանց[33]: Այսպէս, քաղաքային իշխանութիւնների կողմից քաղաքը լքելուց յետոյ, այստեղ Լեւոն Սարգսեանի գլխաւորութեամբ ձեւաւորւում է զանազան կուսակցութիւնների 15 ներկայացուցիչներից բաղկացած իշխանութեան մարմին, որն էլ ձեռնամուխ է լինում քաղաքի գործերի կարգաւորմանը[34]: Ժողովրդական, Սոցիալ-Դեմոկրատ եւ Կոմունիստական կուսակցութիւնների ներկայացուցիչներից բաղկացած այս իշխանութեան մարմինն էլ հենց դիմաւորում է զինադադարով քաղաք մտած թուրքերին: Սակայն միքանի օրից գործնականօրէն ցոյց տալու համար իրենց խորհրդային իշխանութեան կողմնակիցներ, թուրքերն այստեղ հռչակում են խորհրդային կարգեր, ստեղծում իշխանութեան նոր մարմին՝ յեղկոմ[35]: Յեղկոմի իշխանութիւնից հեռանալուց յետոյ, ստեղծում են հերթական իշխանութիւնը՝ Ս. Մատինեանի գլխաւորութեամբ[36]: Իսկ երբ վերջինս, օգտուելով թուրքերի թուլանալուց, փորձում է միանձնեայ կառավարել, թուրքերն Ալեքսանդրապոլում կեանքի են կոչում քաղաքային նոր ինքնավարութիւնը՝ ստեղծելով երկիշխանութիւն:

Թուրքական ժխտողականութեան իւրատեսակ դրսեւորում էր Ալեքսանդրապոլի Գաւառում հինգ ամիս անօրինական մնալը:

1920ին Ալեքսանդրապոլի Պայմանագրի կնքումով թէեւ գաւառը մնում էր ՀՀ կազմում, բայց թուրքերը ոչ մի իրաւական հիմք չունենալով, ամբողջ հինգ ամիս դուրս չեն գալիս այստեղից՝ շարունակելով մինչեւ վերջին հնարաւորութիւնը հայ բնակչութեանը թալանելու եւ կոտորելու քաղաքականութիւնը:

Այս անգամ արդէն հանդէս գալով խորհրդային իշխանութեան երաշխաւոր՝ փորձում են Խորհրդային Ռուսաստանին համոզել, որ առանց իրենց հնարաւոր չէ ՀՀում խորհրդային իշխանութեան ամրապնդումը եւ Անդրկովկասի խորհրդայնացումը[37]: Մասնաւորապէս, պնդելով, որ Հայաստանում խորհրդային իշխանութիւնը դեռ ամուր չէ, խորհրդային իշխանութիւններից պահանջում են դաժան վերաբերմունք՝

դաշնակցականների նկատմամբ: Վերջիններս, թէեւ Դեկտեմբերի 2ի հայ-ռուսական համաձայնագրով պարտաւորուել էին բռնութիւններ չիրականացնել նախկին իշխանութիւնների եւ կառավարող կուսակցութեան անդամների դէմ, դիմում են անօրինակ ճնշամիջոցների: Արդիւնքում թուրքերը ստանում են փետրուարեան ապստամբութիւնը: Դաշնակցական ղեկավարները այլ ելք չունենալով ստիպուած օգնութեան են դիմում թուրքերին կարծելով, թէ նրանց նպատակը խորհրդային իշխանութեան Հայաստանում տապալելն է:

Մասնաւորապէս, 1921 Մարտի 1ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարութեան Արեւելեան ճակատի հրամանատրութեան ներկայացուցիչ Բեհաէդդինին ուղղած գրութեամբ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ Սիմոն Վրացեանը խնդրում էր թուրք բարձր ղեկավարութեանը փոխանցել իր խնդրանքը՝ ազատել հայ գերիներին եւ օգնել զէնքով, քանի որ ըստ իր համոզման «տաճիկ ժողովրդի կենսական շահն էլ պահանջում է Հայաստանի յաղթական դուրս գալն այս կռւից եւ անկախ մնալը»[38]:

Մինչդեռ թուրքերն օգտուելով իրենց կողմից ստեղծուած հնարաւորութիւնից, 1921 Մարտի 16ին Մոսկուայում կնքում են «Ռուս-Թուրքական Եղբայրութեան Եւ Բարեկամութեան Պայմանագիր»ը, բաժանելով Հայաստանն առանց հայերի մասնակցութեան: Թէեւ այս պայմանագրով թուրքերը պէտք է հեռանային Ալեքսանդրապոլի Գաւառից, բայց շարունակում են մնալ այստեղ՝ իբր Անդրկովկասում խորհրդային իշխանութեան հաստատման երաշխաւորներ: Եւ միայն Ապրիլին, երբ ակնյայտօրէն փորձում են գրաւել Բաքուն, Խորհրդային Ռուսաստանի կառավարութիւնը վերջնագրով պահանջում է նրանց հեռանալը:

Թուրքերը, թէեւ 1921 Ապրիլին հեռանում են Ալեքսանդրապոլի Գաւառից, բայց երկար ժամանակ, մինչեւ Կարսի Պայմանագրի կնքումը նոյն ժխտողական ռազմավարութեամբ շարունակում են թշնամական գործողութիւնները Խորհրդային Հայաստանի եւ հայ ժողովրդի նկատմամբ[39]: Իսկ հեռանալիս չեն մոռանում բարեմաղթութիւններ անել «բարեկամ» հայ ժողովրդին՝ միաժամանակ սպառնալով, որ վախենան իրենց երրորդ գալուց՝ խոստանալով քարը քարին չթողնել Ալեքանդրապոլում[40]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Լ. Գասպարեան, «Հայոց Ցեղասպանութեան Ժխտման Փուլերը», *09, 2016* http://repairfuture.net/index.php/hy/armenian-genocide-recognition-and-reparations-standpoint-of-armenia-armenian/the-stages-of-denial-of-the-armenian-genocide-in-turkey-armenian

[2] Առաջին անգամ 1998ին Ցեղասպանագէտների Միջազգային Ընկերակցութեան նախագահ Գրեգորի Սթենթոնը տուեց Ցեղասպանութեան ութ փուլի տեսութիւնը, եւ որպէս ցեղասպանութեան իրագործման վերջին փուլ՝ ամրագրուեց ժխտողականութիւնը: Մանրամասն տե՛ս՝ http://www.genocidewatch.org/aboutgenocide/8stagesofgenocide.html :

[3] http://armscoop.com/2012/01/, Ա. Աւետիսեան, «Հայոց Ցեղասպանութեան Ժխտողական Քաղաքականութեան Մէջ Հասարակական Կարծիք Ձեւաւորողների Դերը Եւ Գործունէութեան Ժամանակակից Մեթոդները»:

[4] Կ. Ալեքսանեան, «Թուրքիայի Ցեղասպանութեան Քաղաքականութեան Շարունակութիւնն Ալեքսանդրապոլի Գաւառում», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, թիւ 1, 2005, էջ 18-25:

[5] http://www.armin.am/images/menus/2472/Ruben_Melqonyan.pdf, «Հայոց Ցեղասպանութեան Նկատմամբ Թուրքական Քաղաքականութեան Որոշ Առանձնայատկութիւնների Շուրջ (1965 եւ 2015):

[6] Ալեքսանեան Կ., «Հայ-Թուրքական Յարաբերութիւնները Ալեքսանդրապոլի Գաւառի Թուրքական Ռազմակալման Շրջանում (1918-1921)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԵ.*, Պէյրութ, 2015, էջ 293-326:

[7] Յարութիւն Թուրշեան, *Սարդարապատի Հերոսամարտը*, Երեւան, Հայաստան Հրատ. 1969, էջ 121:

[8] Հրանդ Աւետիսեան, *Հայկական Հարցը 1918թ.*, Երեւան, Բարձրագոյն Դպրոց Հրատ., 1997, էջ 197:

[9] Աւետիսեան, էջ 197:

[10] ՀԱԱ, ֆ.57, g.5, գ.187, թ.1-41:

[11] ՀԱԱ, ֆ.370, g.1, գ.5, թ.7-8:

[12] Աւետիսեան, էջ 197:

[13] ՀԱԱ, ֆ.57, g.5, գ.187, թթ.1-41:

[14] ՀԱԱ, ֆ.105, g.1, գ.2711, թթ.3-4:

[15] ՀԱԱ. Ֆ.370, g.1,գ.1, թ. 14:

[16] ՀԱԱ, ֆ.370, g.1, գ.5, թ.4:

[17] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.126, թթ.1-2:

[18] ՀԱԱ, ֆ.57, g.5, գ.187, թթ.1-41:

[19] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.126, թ.41-42:

[20] Կարինէ Ալեքսանեան, «Արեւմտահայ Գաղթականութեան Դրութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1918-1921թթ.», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԳ.*, Պեյրութ, 2013, էջ 83-100:

[21] Կ. Ալեքսանեան, «Տեղական Կառոյցների Օգտագործման Թուրքական Քաղաքականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1918-1921թթ», *ՀՀ ԳԱԱ, ՇՀՀԿ, Գիտական Աշխատութիւններ, Հտր. 8*, Գիւմրի, 2005, էջ 44-52:

[22] ՀԱԱ, ֆ.105, g.1, գ.2711, էջ 3-4:

[23] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.126, թ.1-2:

[24] Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի Գաւառում ՀՀ Դիւանագիտական Ներկայացուցիչ Գ. Խոյեցեանի Զեկուցագրերը Արտաքին Գործերի Նախարարին Ալեքսանդրապոլի Գաւառի Իրադրութեան Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, թիւ 122, 2014, էջ 112-149:

[25] Էդիկ Զօհրաբեան, *1920թ. Թուրք-Հայկական Պատերազմը Եւ Տէրութիւնները*, Երեւան, Ոսկան Երեւանցի Հրատ., 1997, էջ 287:

[26] Կարօ Սասունի, «Հայ-Թուրքական Պատերազմը», *Հայրենիք*, Բոստոն, 1926, թիւ 9:

[27] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ.600, թ.202-203:

[28] ՀԱԱ., ֆ.4047, g.1, գ.151, թ.4: Ֆ.200, g.1, գ.600, թ.229:

[29] ՀԱԱ, ֆ.4033, g.1, գ.127, թ. 167

[30] Զօհրաբեան, էջ 292:

[31] ՀԱԱ, ֆ.105, g.1, գ.3000, թ. 1:

[32] ՀԱԱ, ֆ.114, g.2, գ.10, թ.12:

[33] Ալեքսանեան, «Տեղական Իշխանութեան Մարմինների», էջ 49-52:

[34] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.448, թ.1. նաեւ՝ *Ժողովուրդ*, Երեւան, 1920, թիւ 182:

[35] Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի Բոլշեւիկեան Յեղկոմի Գործունէութիւնը 1920թ», *Գիտական Աշխատութիւններ, Հտր. 1*, 1999:

[36] Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի Ժամանակաւոր Իշխանութեան Մարմինների Գործունէութիւնը 1921թ. Փետրուար-Ապրիլ Ամիսներին», *Շիրակի Պատմամշակութային Ժառանգութիւնը, Միջազգային 8-րդ Գիտաժողով*, Գիւմրի, 2010, էջ 97-105:

[37] ՀԱԱ, ֆ. 4033, g.2, գ.1166, թ. 1:

[38] ՀԱԱ, ֆ. 114, g.2 գ. 109, թ. 48:

[39] Կարինէ Ալեքսանեան, «Թուրքիայի Հակահայ Քաղաքականութեան Դրսեւորումներն Ալեքսանդրապոլի Գաւառում 1921թ. Ապրիլ-Հոկտեմբերին», *ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, Գիտական Աշխատութիւններ, Հտր. 12*, 2008, էջ 70-75:

[40] Ալեքսանեան, «Թուրքիայի Ցեղասպանութեան Քաղաքականութեան»:

DENIALISM DURING THE TURKISH OCCUPATION OF THE DISTRICT OF ALEXANDROPOLE (1918-1921)
(summary)

KARINE ALEXANIAN
karineal@mail.ru

The research looks for the roots of Turkish denialism of the events of 1918-1921 and examines whether it has its offshoots in the current Turkish denialist policies.

In the context of the Turkish genocidal policy against the Eastern Armenians during 1918-1921, the study of Turkish denialism clarifies the nature of Turkish-Armenian relations. Furthermore, it sheds light on the roots which nurture current Turkish denialism. In this paper the author addresses how Turkish denialist policy tried to align Turkish interests with superpower interests, claim support of Armenian interests and pose Turks as liberators of Armenians, blame Armenians for the brutalities committed against Muslim Turks, and generate contradictions and divide the Armenian polity while denying them the ability to resist. Moreover, in order to erase its fingerprints from the 1915 Genocide, Turkish denialist policy attempted to annihilate the decimated Western Armenian refugees who had taken refuge in Eastern Armenia. Moreover, during their occupation of the District of Alexandropole, the Turkish authorities tried to win the confidence of the local population through popular diplomacy and creation of local government agencies to give legitimacy to Turkish misdeeds. Such methods would enable them to further their policy of brutalities against and lootings of Armenians by discrete and legitimate means, though taking every measure to exterminate them. The author concludes that the major objective of these policies was to make the sustainability of any Armenian statehood impossible.